# Արձանագրություն 2

***Վանաձոր համայնքի Տավրոս 3-րդ փողոցի վերջնամասում անձրևաջրատար ընդունիչ դիտահորի կառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78»*** ***ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի***

*Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «31» օգոստոսի 2021թ. ժամը 10:00-ին:*

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

Գագիկ Հարությունյան

***Անդամներ***

Սամվել Մկրտչյան, Արթուր Մովսիսյան,

Անուշ Մելիքյան,Լիանա Աջամյան

***Գնումները համակարգող***

Վեներա Վասիլյան

## 1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն,որ

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

1.2 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրացուցային օրը, ժամը 10:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:*

## 2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները)

2.1 Վանաձորի համայնքապետարանի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

| Անվանումը | Հասցե |
|---|---|
| «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ | ք. Վանաձոր,Թևոսյան փ. Շ. 2/7 |
| «ՆԱՐ-ԴԱՅ» ՍՊԸ | - |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

## 3.Մասնակցի հայտում առկա անհամապատասխանության վերաբերյալ

3.1 «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում կցված փաստաթղթերը հաստատված են ոչ թե տնօրենի այլ մեկ այլ անձի էլեկտրոնային ստորագրությամբ,սակայն հայտում կցված չէ լիազորագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

## 4.Հանձնաժողովը որոշման վերաբերյալ

4.1 Համաձայն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով հրավերի 8.9-ի կետի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը՝ *մասնակցին առաջարկելով, մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 02.09.2021թ. ժամը 10:00-ն, շտկել անհամապատասխանությունը* և ուղղարկել gnumnervanadzor@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

## 5.Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

5.1 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 02.09.2021թ. ժամը 10:00, հասցեն ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, 311 աշխատասենյակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

*Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց «02» սեպտեմբերի 2021թ. ժամը 10:00-ին:*

**6.Անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ**

6.1 «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**7.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

7.1 «ՆԱՐ-ԴԱՅ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտում ոչ մի փաստաթուղթ կցված չէ:

7.2 «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հրավերին համապատասխան հայտ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

8.1 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով ընթացակարգին մասնակցի կողմից առաջարկած գինն է՝

*Չափաբաժին 1*

| ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔ(ՆԵՐ)Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ԱՐԺԵՔ (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար) | ԱԱՀ | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳԻՆ |
| **Վանաձոր համայնքի Տավրոս 3-րդ փողոցի վերջնամասում անձրևաջրատար ընդունիչ դիտահորի կառուցման աշխատանքների ձեռքբերում** | | | | | |
| | *Մասնակիցների անվանումները* | *Նախահաշվային գին* | | | |
| 1 | «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ | *3782771* | 3091600 | 618320 | 3709920 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:*

**9.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին**

9.1 Մերժել «ՆԱՐ-ԴԱՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

9.2 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ–ին՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ:

9.3 Հաստատել «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/78» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

9.4 «ԿԱՐ-ՍԼԵՅԹ» ՍՊԸ–ին սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Գ. Հարությունյան

հանձնաժողովի անդամներ՝

____________ Ս. Մկրտչյան

____________ Ա. Մովսիսյան

____________ Ա. Մելիքյան

____________ Լ. Աջամյան

Գնումները համակարգող՝ ____________ Վ. Վասիլյան